նորագրած է երոպական Միութեան անդա- մակցութեան համար անհրաժեշտ բարեփո- խումներուն նկատմամբ: Ան նաեւ կասկե- ծով կը մ'օտենայ Միջազգային Դրամական Ծննդի բարեկարգումի ծրագիրին: Կուսակ- ցութիւնը ընդհանրապէս օտար միջամտու- թիւնները անվտանգ նկատելու հակումը ու- նի:

Բարձրագոյն խորհուրդը 20 Սեպտեմբերին արգի- լեց իրտողանին մասնակ- ցութիւնը վաղուան ընտ- րութիւններուն, այն պատճառաբանութեամբ, որ իրտողան նախապէս ստացած էր վճիռ մը, որ իրեն ցկեանս կ'արգիլէ երկրի քաղաքական

կեանքին մասնակցի: Խորհուրդը նոյն որոշու- մով ընտրութիւններուն մասնակցելու իրաւուն- րութիւններուն, այն պատճառաբանութեամբ, որ իրտողան նախապէս ստացած էր վճիռ մը, որ իրեն ցկեանս կ'արգիլէ երկրի քաղաքական

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍՆԱԿՅՈՂ ԳԼԽԱՒՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- 1.- ԺՈՂՈՎՈՐԻՍՏԱՎԱՐ ԶԱԽ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ («ՏԻ. ԷՍ. Փի.») Վարչապետ Պիւլէթ Էճելիթի գլխաւորած այս կուսակցութիւնը մինչեւ վեր- ջերս երկրին մեծագոյն կուսակցութիւնն էր: Սակայն Յուլիսին կուսակցութեան անդամ խորհրդարանականներուն մ'օ- տաւորապէս կ'եր (որոնց շարքին նաեւ կարգ մը նախարարներ) հրաժարեցաւ իբրեւ բողոք պետութեան եւ կուսակցու- թեան տկարացումին դէմ: Հակառակ իր առողջութեան քայքայ- յումին, 77ամեայ Պիւլէթ Էճելիթ մեր- ժեց ներկայացնել իր հրաժարականը, ինչ որ մեծ դեր ունեցաւ երկրին քաղա- քական տագնապին մէջ: Էճելիթ բուն կերպով ընդդիմացաւ կանխահաւ ընտ- րութիւններու գաղափարին յայտնելով, թէ այդ մէկը անկայուն վիճակ կը ստեղծէ երկրին մէջ, մինչ պետութիւնը կը փորձէ տնտեսութիւնը բարելաւելու ծրա- գիր մը գործադրել եւ երոպական Միու- թեան անդամակցութեան համար որոշ օրէնքներ որդեգրել: Ըստ հարցախոյզներու, աւելի քան 60 խորհրդարանականներու հրաժարումէն ետք, կուսակցութիւնը երկրի քաղաքա- կան ուժերու առաջին դիրքէն շարորդ դիրք նահանջեց: Հարցախոյզները ցոյց կու տան նաեւ, որ կուսակցութիւնը հա- ւանաբար ստանայ ընդհանուր քուէնե- րուն հազիւ 4 առ հարիւրը, ինչ որ ան- բաւարար է խորհրդարանին մէջ ներկա- յացուցիչ ունենալու համար:
- 2.- ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ («ԷՄ. ԷՅԶ. Փի.») Աշակողմեան այս կուսակցութիւնը այժմ երկրին մեծագոյն կուսակցու- թիւնն է: Այս կուսակցութիւնը ջատա- գովն է ամբողջովին ազգայնական քա- ղաքականութեան եւ յստակ կեցուածք որդեգրած է քրտական շարժումին դէմ: Կուսակցութիւնը վերապահ կեցուածք

- 3.- ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ («ԱՆԱՓ») Համաձայնական կառավարութեան եր- րորդ անդամը պահպանողական կուսակ- ցութիւն մըն է, որ հարցախոյզներու հա- մաձայն, լաւ դիրքի վրայ չէ: Կուսակցու- թեան ղեկավարը նախկին վարչապետ Մե- սութ Երլմազ Երոպական Միութեան հետ յարաբերութիւններու պատասխանատուն է:
- 4.- ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐԳԱՎԱՃՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ («ԷՅ. ՔԷՅ») Այս կուսակցութիւնը, որ ըստ հարցա- խոյզներու, առաջնային դիրք կը գրաւէ, կազմուած է անցեալ տարի իսլամամետ Առաքինութիւն կուսակցութեան չափաւոր- ական կարգ մը անդամներու կողմէ: Նախնական տունեակներու համաձայն, կուսակցութիւնը հաւանաբար ապահովէ ընդհանուր քուէներուն 20 առ հարիւրէն աւելին: Կուսակցութեան ղեկավարը Պոլ- սոյ նախկին քաղաքապետ Իեհեպ Թալիպ Էրտողան կը հաւաստիացնէ, որ կրօնը որե- լէ ազդեցութիւն չունի կուսակցութեան գաղափարաբանութեան վրայ: Ան կուսակ- ցութիւնը կը ներկայացնէ իբրեւ ժողովրդ- ղավարական, պանպանողական կուսակ- ցութիւն մը: Այնուամենայնիւ, Արդարու- թիւն եւ Բարգաւաճում կուսակցութիւնը քա- ղաքական շրջանակներուն կողմէ ընդհան- րապէս նկատուած է իսլամամետ կուսակ- ցութիւն: Դատական որոշումով մը արգիլ- ուած է կուսակցութեան ղեկավարին՝ Էր-

- 5.- ՆՈՐ ԹՈՒՐԳԻԱ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ Նոր Թուրքիան երոպամետ քաղա- քական նոր շարժում մըն է, որ կազմը- ւած է ժողովրդավար Ձախ կուսակ- ցութեան նախկին անդամներ՝ արտա- քին գործոց նախկին նախարար Իսմա- յիլ ձէմի եւ նախկին փոխ վարչապետ Հիւսամէթիին Օզքանի կողմէ: Նոր Թուրքիա ներկայ խորհրդարանին հինգ- գերորդ մեծ կուսակցութիւնն է եւ կը վայելէ վարչապետ Պիւլէթ Էճելիթի կուսակցութեան մ'օտաւորապէս 60 նախկին անդամներուն զօրակցութիւնը:
- 6.- ԾՄԱՐԻՏ ՈՒՂԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ («ՏԻ. ՈՒԱՅ. Փի.») Թանու Զիլիթի գլխաւորած այս կու- սակցութիւնը պահպանողական ընդդի- մադիր գլխաւոր կուսակցութիւնն է: Թանու Զիլիթ եղած է Թուրքիոյ առա- ջին կին վարչապետը (1993-1996): Իր պաշտօնավարութեան ընթացքին ան աշխատանք տարած էր Թուրքիոյ առա- ջին իսլամական վարչապետ Նեքմէթ- թին Էրպաքանը իշխանութեան բերելու: Սակայն երկրին աշխարհիկ կարգերը պաշտպանող եւ մեծ հեղինակութիւն վայելող գիւնուրակներու ճնշումնե- րուն տակ երկուքն ալ նահանջած են: Հակառակ ասոր, սակայն, Թանու Զի- լիթ բարձր քաղաքականութեան մէջ կը մնայ կեդրոնական դէմք եւ ինքզինք հռչակած է վարչապետութեան թեկնա- ծու: Հարցախոյզները ցոյց կու տան, որ կուսակցութիւնը զօրակցութիւն կը վա- յելէ յատկապէս Անատոլիոյ մէջ եւ կրնայ ապահովել ընդհանուր քուէնե- րուն մօտ 10 առ հարիւրը:

տողանի մասնակցութիւնը ընտրու- թիւններուն: 5.- ՆՈՐ ԹՈՒՐԳԻԱ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ Նոր Թուրքիան երոպամետ քաղա- քական նոր շարժում մըն է, որ կազմը- ւած է ժողովրդավար Ձախ կուսակ- ցութեան նախկին անդամներ՝ արտա- քին գործոց նախկին նախարար Իսմա- յիլ ձէմի եւ նախկին փոխ վարչապետ Հիւսամէթիին Օզքանի կողմէ: Նոր Թուրքիա ներկայ խորհրդարանին հինգ- գերորդ մեծ կուսակցութիւնն է եւ կը վայելէ վարչապետ Պիւլէթ Էճելիթի կուսակցութեան մ'օտաւորապէս 60 նախկին անդամներուն զօրակցութիւնը: 6.- ԾՄԱՐԻՏ ՈՒՂԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ («ՏԻ. ՈՒԱՅ. Փի.») Թանու Զիլիթի գլխաւորած այս կու- սակցութիւնը պահպանողական ընդդի- մադիր գլխաւոր կուսակցութիւնն է: Թանու Զիլիթ եղած է Թուրքիոյ առա- ջին կին վարչապետը (1993-1996): Իր պաշտօնավարութեան ընթացքին ան աշխատանք տարած էր Թուրքիոյ առա- ջին իսլամական վարչապետ Նեքմէթ- թին Էրպաքանը իշխանութեան բերելու: Սակայն երկրին աշխարհիկ կարգերը պաշտպանող եւ մեծ հեղինակութիւն վայելող գիւնուրակներու ճնշումնե- րուն տակ երկուքն ալ նահանջած են: Հակառակ ասոր, սակայն, Թանու Զի- լիթ բարձր քաղաքականութեան մէջ կը մնայ կեդրոնական դէմք եւ ինքզինք հռչակած է վարչապետութեան թեկնա- ծու: Հարցախոյզները ցոյց կու տան, որ կուսակցութիւնը զօրակցութիւն կը վա- յելէ յատկապէս Անատոլիոյ մէջ եւ կրնայ ապահովել ընդհանուր քուէնե- րուն մօտ 10 առ հարիւրը:

Էջը պատրաստեցին Լ. ԱՒԵՏԱՆԵԱՆ Է. ՄԱՅԻՍԵԱՆ

«ԳՐԱԿԱՆ ԷՋ»Ը ԲԱՅԱՌԱԲԱՐ ԵՐԵՔՈՒԱԲԹԻ

Թուրքիոյ խորհրդա- րանական վաղուան արտակարգ ընտրու- թիւններուն առիթով, «Գրական էջ»ի յատ- կացուած այս էջը կը տրամադրուի ընտրու- թիւններուն: Բ ա ց ա ռ ա բ ար , «Գրական էջ»ը լոյս կը տեսնէ Երեքշաբթի, ճրդ էջով:

Շար.ը՝ էջ 8

Մանկապատանեկան


ԱՃՈՒՆ Է

ԱՆՏԱՌԻՆ ՄԷՉ...

(Ա. ՄԱՍ)

Աչնան ծառը թագաւոր է: Ամեն յարմար ժամանակն է պզտիկ պտոյտ մը ընելու բնութեան մէջ եւ ծառերու գաղտնիքները լուսաբանելու:

1) ՇՈՃԻԻ ԿՈՆՈՎ
- Պէտք ունիս - Շոճիի կոնով շինել պտուղի մը (սննդամթերքի, օգտակար, գործարար խելի, ներկի):



- Շոճիի պտուղը վերածել ոգնիի: Կաւին ձեռնալող շինել ոգնիին 4 ոտքերը, գլուխը, 2 ալանջները եւ քիթը: Ձգէ, որ չորանան: Բոլոր կտորները հաւաքէ եւ զանոնք փակցուր շոճիի պտուղին վրայ, կենդանիին հաւասարակշռութիւնը պահելով: Ջրաներկով գեղեցիկ գոյն մը տուր ոգնիիդ:

2) ԾԱՌԻՆ ՏԱՐԻՔԸ
Եթէ ուսումնասիրես ծառի մը կոճղը, պիտի ծառին ծնողեան թուականը: Կանգնած ծառ: Ամէն տարի ծառի կոճ-



ղին շրջագիծը կ'աւելնայ մօտաւորապէս 2 սմ: Ձափէ ծառին կոճղին շրջագիծը սանթիմետրով եւ այս թիւը բաժնէ 2-ով: պիտի ստանաս ծառին մօտաւոր տարիքը:

- Կտրուած ծառ: Կտրուած կոճղի մը վրայ ուսումնասիրէ գծաւոր շրջանակները, անոնք ծառին ծիրերն են: Ամէն տարի 2 ծիր կը կազմուի կոճղին շուրջ, բաց գոյնով շրջանակ մը պայծառ եղանակին եւ մուգ գոյնով շրջանակ մը ձմրան ընթացքին: Հետեւաբար անոնք կը համապատասխանեն մէկ տարուան: Այս շրջանակները հաշուէ կեղծոնէն սկսելով եւ պիտի գտնես ծառին տարիքը:

3) ԳՈՒՆԱՌՈՐ ՀԵՏՔԵՐ
- Պէտք ունիս - Գու-

ԿՈՒՉՈՒԻ
«Շատատուրիւն մը կարիք ունի վաճառող փորձառու ներկայացուցիչ օրիորդներու: Ամսական + փոխադրածախս + պոնուս: Դիմել՝ հեռ. 01-844300:


ՎԱՐՉՈՒ ՅԱՐԿԱՔԱԺԻՆ
«Պուրճ Կամուտ, «Արմենիա» պողոտայ, Զաղաքապետարանի մօտ, Ա. յարկ, գրասենեակի կամ դարձմանատան յարմար: Հեռ. 01-256015:



նաւոր թուղթերու, տերեւներու, ջրաներկի: - Տերեւներով շինել նամակի գեղեցիկ թուղթեր: Թուղթերով պատրաստէ բացիկներ եւ պահարաններ: Տերեւներուն վրայ ջրաներկ քսէ եւ ապա զանոնք դարձուր բացիկներուն վրայ՝ անոնց վրայ լաւ ճնշելով, որպէսզի տերեւներուն հետքերը տպուին թուղթերուն վրայ:

5) ԾԱՌՄԸ ՏՆԿԷ
- Պէտք ունիս - Ծառի հատիկներու, թաղարի մը, աւազի եւ փտահողի: - Լաւ առիթ մը՝ հաւաքելու եւ տնկելու հատիկներ: Հաւաքէ ծառի

4) ՄՇՏՆՁԵՆԱԿԱՆ ԾԱՌՄԸ
- Պէտք ունիս - Տերեւներով պզտիկ ճիւղերու, ծաղկամանի մը, կլիսէրի:



հատիկներ, խոզկաղին, շագանակ, շոճիի խոզակ, թմբի, սօսիի հատիկներ, կեռասի, ծիրանի կորիզներ... Կարճ ժամանակի մը համար զանոնք խոնաւ տեղ մը դիր: Երբ հատիկը ծլի, զայն տնկէ աւազով եւ փտահողով լեցուն թաղարի մը մէջ: Մանր «ծառ» դիր լուսաւոր եւ տաքուկ վայրի մը մէջ եւ կանոնաւոր կերպով զայն ջրէ:

ԸՍՏ ՏԱՐԱԾՈՒԱԾ ԵՒ ԸՍՏ ՀԻՆ ՊՏՈՒՂ ՄԸ՝ ԽՆՁՈՐԸ

Սիրող քաղցր բաց մը կ'ուզէ. շաքարներուն վրայ յարձակելու փոխարէն, նախընտրէ սննդարար խնձոր մը ուտել: Խնձորը շատ հին պտուղ մըն է: Պատմութեան ընթացքին մարդիկ միշտ խնձոր կերած են: Կան տարբեր գոյնի եւ տեսակի խնձորներ (ուտելու, եփելու, հիւթը խմելու, եւ այլն): Ներկայիս մեզի ծանօթ է խնձորի 3000 տեսակ:

Խնձորները կը քաղուին աշնան, ապա կը պահուին եւ կը ծախուին ամբողջ տարուան ընթացքին: Միւս պտուղներուն նման, խնձորն ալ բազմաթիւ կենսանիւթեր ունի: Սակայն անոր գլխաւոր առաւելութիւնը փեքթին նիւթն է, որ մեզի կարելիութիւն կու տայ արեան մէջ մեր շաքարին հաւասարակշռութիւնը պահելու: Խնձորին բարիքներէն լաւագէտ օգտուելու համար զայն լաւ լուսով եւ կեղեւով կեր:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ
«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթեռնի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատում) ներկայացնել «Ազգակ»ի ծանուցումներու գրասենեակը:

ՄԱՐԶԱՆՔ ԸՆԵՆՔ (Բ. ՄԱՍ)

Մեր անցեալ շաքարաւոր էջով տեսանք, թէ ի՞նչպէս կարելի է բարելաւել մեր արդիւնքները մարզանքի դասին ընթացքին: Ահա քանի մը նոր թելադրանքներ՝ իսկական մարզիկ մը դառնալու համար:



•ՄԱՐԶԱՆՔԵՆ ԱՌԱՋ ԵՒ ԵՏՔ...
Մի՛ մոռնար, թէ մարմինը ջուրի պէտք ունի, իսկ մկանները՝ «վառելանիւթի» (ջերմութի): Հետեւաբար մարզանքէն ետք նախատեսէ խմելիք եւ ուտելիք բան մը (պանան մը կամ հացահատիկով յատուկ անուշեղէն մը...):

•ԻՆՉ ՀԱՐՆԻԼ
Պէտք չունիս չորս կողմ վազելու՝ արհեստավարժ մարզիկի մը նման տարագ զնելու համար: Ամէնէն կարեւոր կէտը այն է, որ դու ճանաչուիր ինքզինքդ: Հետեւաբար մարզական սովորական երկար տարատ մը եւ էսփատրիլներ շատ յարմար են: Պէտք չունիս նաեւ վերջին նորոյթի կարճ վարդազոյն շորթին (որ ծունկը պիտի չպաշտպանէ, եթէ գետին իյնաս), կամ պզտիկ ճերմակ էսփատրիլի (որ աւելի գեղեցիկ է մեծ ու բարձր էսփատրիլներէն, սակայն անոնց նման չի կրնար պաշտպանել ոտքի կրունկը):

•ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ԸՆԵԼ
- Վազել արագութիւնը աւելցուր: Ընկերոջ մը հետ փորձեր կատարեցէք, իրարու վազքին ժամանակները բռնելով նախ 10 մետրի վրայ, ապա՝ 20ի եւ վերջապէս՝ 50ի:

- Սորվէ շարժումները համակարգել: Ա.- Այլ ձեռքով թեքիսի գնդակ մը նետէ պատին եւ զայն բռնէ ձախ ձեռքով: Ապա հակառակ փորձէ: Բ.- Հիմա ալ ձեռքով դարձեալ գնդակը նետէ, սակայն օդին մէջ եւ զայն բռնէ ձախ ձեռքով: Նոյն վարժութիւնը կրկին ձախ ձեռքով: Գ.- Վերջապէս, փորձէ երկու ձեռքերով նետելու: Բռնել գնդակը:


- Մկաններդ աշխատելու վարժեցուր: Բոլոր առիթները լաւ են մկաններդ աշխատեցնելու համար: Ա.- Ոտքերուն համար: Մոտցիր վերելակը եւ աստիճաններէն բարձրացիր (մի վարանիր այս վարժութիւնը բանի մը անգամ կրկնելու), ինքնաշարժով տեղափոխուելու փոխարէն նախընտրէ հեծիկով կամ քայլով երթալ... Բ.- Թելերուդ համար: Ծնողքիդ օգնէ գնած իրերը շալկելու: Եթէ մարզանքի գունդեր ունիս, փորձէ զանոնք վերցնել:

- Հաւասարակշռութիւնը կայուն պահէ: Ոտքերու վրայ իյնալը նախընտրելի է՝ յետոյքի վրայ իյնալէն: Գետնին վրայ (մայթին վրայ, անցքի մը մէջ, պատշգամին վրայ...) կաւիճով իրարմէ միշտ հեռու նշաններ գծէ: Մէկ նշանէն միւսը ցատկէ նախ երկու ոտքերդ իրարու փակցուցած, ապա՝ մէկ ոտքով:


ՎԵՐՉԱՊԵՍ
Եթէ այս բոլոր թելադրանքները օգտակար չըլլան քեզի, մեծ հարց մը չէ: Պարզապէս դու շատ լաւ չես մարզանքի մէջ. կարելի չէ ամէն ինչի մէջ շատ լաւ ըլլալ, ընդունել: Բոլորին յայտարարէ ասիկա տարւան սկիզբէն եւ խոստացիր, որ ամէն պարագայի հանելի ժամանակ պիտի անցնի մարզանքի իւրաքանչիւր դասի: Այլապէս բաւական ծանձրացուցիչ պիտի ըլլար, եթէ դասարանին մէջ բոլորն ալ ախոյեաններ ըլլային...:

PHOTO NERSES
ԱՐԱԳ ՄԱՍԱՐԿՈՒԹԻՆ - ՈՐԱԿԱՌՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ
Չոր ուրախ առիթներու լուսանկարները տպեց ճոր հասած ԱՐԻՍԿԱՆ ՈՒՇԱԳՐՈՒ ԹԻՅՈՂՈՎՈՐ ԻՐԱԿԱՌՈՐ ԵՒ ԳՈՐԾԱԳՈՐԾ ԿԱՐԿԵՐՈՎ
Ստանձնում՝ 20 վայրկեանէն:
Լուսանկարները կ'արձանագրենք CDի եւ կամ FLOPPY տիպիներու վրայ:
Cameraներու ճոխ հաւաքածոյ:
Այլոքներ եւ մկարի շքանակներու ընտիր տեսակածոյ:
Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը. արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիներով
Պուրճ Կամուտ, Զաղաքապետարանի փողոց.
«Սանթր Արիս»ի դիմաց. Հեռ. 01-261858 եւ 01-255992


Ժ Ա Մ Ա Ն Յ




Թութակը ո՞ր ճամբան պետք է առնէ պիտակին հասնելու համար:




Ներկէ՛ այն երկու տունները, որոնք նոյնանման են:



Թռչունը քանի՞ ոտով կ'ապրի պիտակին հասնելու:



Ո՞ր բանալին պիտի մտնէ կղպանքին մէջ:



Ո՞ր փղը միւսէն աւելի ծանր է:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ
ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՍԿԵՐԻՉՆԵՐՈՒՆ
RELAX CLUS.
Կը ստանձնէ ոսկերիչներու յատուկ ՈՍԿԻԻ ԹԱՓԾՈՒՄ (GOLD CASTING) ԳՈՐԾԵՐ
արդիական ելեկտրոնիք մեքենաներով
•Մաքրութիւն •Փայլք
•Բժականոր աշխատանք
•Սասնագիտացած անձնակազմ
Մատչելի գին, ճիշտ սպասարկութիւն
Հեռաձայն / Ֆաքս: 01 - 889188
եւ 03 - 375724

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ...

Շարունակում՝ 5րդ էջէն

7.- ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ («ԱՍԱՏԵՓ»)

Այս մէկը Առաքինութիւն Կուսակցութեան անբարձր կողմից կուսակցութիւնն է: Շատեր գայն կը ներկայացնեն իբրեւ իսլամաճառ, որովհետեւ ան կապ կը պահէ նախկին իսլամական վարչապետ Էրպաքանի հետ: Հարցախոյզներու համաձայն, կուսակցութիւնը կրնայ պահանջել ընդհանուր բուէնթուրն միայն 4 առ հարիւր:

Նշենք, որ Առաքինութիւն Կուսակցութեան գործունէութիւնը արգելուած է աշխարհիկ կարգերու:

«ԱՉԳԱԿ»-ի ՄԵԶ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ
Բոլոր անցնողները կը փափաքին «Ազգայն» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունքը հասցնեն հրատարակման թուականէն առնուազ օր մը առաջ: Մինչեւ երեկոյցէն ժամը 5:00:
ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահագոյ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան առնել որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՊԵՏՐՈՍ ԺԱՄԿՈՅԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցի առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 3 Նոյեմբեր 2002, Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ Ա.Փրկիչ եկեղեցու մէջ, առաւօտեան ժամը 10:00ին:

ԶԱՊԵԼ ԹԱԹԱՐԵԱՆԻ մահուան քառասունցի առիթով, ԵՆ ԼՈՒՍԻԱ ԹԱԹԱՐԵԱՆԻ, ՄԻՍԱԸ ԳԱՍՈՅԵԱՆԻ եւ ՖԱՆԹԵ ԳԱՍՈՅԵԱՆԻ մահուան յիշատակին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 3 Նոյեմբեր 2002, Նոր Մարշի Սրբոց Զառահայկաց Մանկաց եկեղեցու մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՍԱԹԵԼԻԿ ԿԱՆԻՄԵԱՆԻ մահուան քառասունցի առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 3 Նոյեմբեր 2002, Անթիլիասի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՎԵՐԺԻՆ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ մահուան քառասունցի առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 3 Նոյեմբեր 2002, Անթիլիասի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ԺԻՐԱՅՐ ԳԱՅԵՐԼԵԱՆԻ մահուան քառասունցի առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 3 Նոյեմբեր 2002, Նոր Ատանայի Ա. Աստուածածին եկեղեցու մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5290 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

Table with 11 columns and 11 rows for the 5290 crossword puzzle. The grid contains black squares indicating non-letter positions.

- 1. Կեղծ, արուեստակեալ:
2. Որովհետեւ - Պատանջ:
3. Ածականակերտ մասնիկ - Իզական անուն:
4. Կախանաւորել:
5. Էական բայ - Յուցական անական - Իրանահայ օրաթերթ:
6. Խամբիլ:
7. Գրամանիչ մը - Պաշար:
8. Չբերականութիւն - Անտէր:
9. Յուելում - Յուցական անական - Հարցական դերանուն:
10. Չորրորդ Հայր նահանգի գաւառներէն:
11. Ստեղծարարի նուագարան - Ջանա:

ԹԻՒ 5289 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԹՈՒՄԸ
Table with 11 columns and 11 rows for the 5289 crossword puzzle.

դեմ իր որդեգրած կեցուածքին պատճառով:

8.- ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ («ՀԱՏԵՓ»)

Կուսակցութիւնը կը պաշտպանէ Թուրքիոյ 12 միլիոն քրիստոնէի իրաւունքները: Յուլիսին վարչապետ Պիլիքի Էնեւիլի գայն ամբաստանեց Քրտական Աշխատաւորական Կուսակցութեան (ԲԱԿ) հետ կապ ունենալու յանցանքով: Կուսակցութիւնը հերքեց ամբաստանութիւնը, սակայն այժմ երկրին սահմանադրական ատենախնդիրը դատավարութեան կ'ենթարկուի: Հարցախոյզներու համաձայն, կուսակցութիւնը կրնայ պահանջել խորհրդարան մուտքի անհրաժեշտ 10 առ հարիւր բուէնթուրն, սակայն անհաւանական կը նկատուի, որ ան մաս կազմէ համաձայնական կուսակցութեան մը:

9.- ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ («ՍԻ. ԷՅԸ. ՓԻ.»)

Աթաբուրքի կողմէ հիմնուած այս կուսակցութիւնը ձախակողմեան կուսակցութիւն մըն է եւ 1980ական թուականներէն ի վեր կը հանդիսանայ վարչապետ Էնեւիլի կուսակցութեան գլխաւոր հակակոնքողը: Վերջին ընտրութիւններուն ան չչաջողեցաւ բուէնթուրն 10 առ հարիւրը ապահովել: Դեռ տեղի համաձայն, վարչապետին կուսակցութեան ներկայ քայքայուած վիճակը կրնայ պատճառ դառնալ, որ Հանրապետական Ժողովրդային Կուսակցութիւնը վերստին խորհրդարան մուտք գործէ, մահաւանդ որ վերջերս կուսակցութեան միացաւ Թուրքիոյ տնտեսութեան նախարար՝ Բեմալ Տերվիշ: Կուսակցութեան ղեկավարն է Տեմիլ Պայքալ:

10.- ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Աշակողմեան այս կուսակցութիւնը հիմնուած է 10 Յուլիս 2002ին: Կուսակցութեան հիմնադիրն է միլիտանտ Զեմ Ուզան, որ կարգ մը դատարաններու կողմէ ամբաստանուած է զեղծարարութեամբ: Քաղաքական վերլուծողներու համաձայն, այս կուսակցութիւնը կրնայ ընդհանուր բուէնթուրն 10 առ հարիւրը ապահովել: «ՏԻ Իթոնմիսի» կը գրէ, թէ Ուզան մտադիր է Միացեալ Նահանգներու եւ Արեւմուտքին «դաս մը տալ» եւ «Միջազգային Դրամական Ֆոնդը վտարել»: Ուզան նաեւ խոստացած է ջնջել յաւելելի արժէքի տուրքը, ժողովուրդին հողային տարածքներ տրամադրել, աշակերտներու ձրի դասագիրքեր բաժնել եւ համալսարաններու թիւը աւելցնել:

Ուզան Թուրքիոյ լրատուամիջոցներու օրէնքները խախտած է, երբ իրեն պատկանող 8 ձայնասփիւռի կայանները, հետաետեիլի 3 կայանները, 2 թերթերը եւ բնակարանները ընկերութիւնը օգտագործած է ժողովուրդին գորակցութիւնը ապահովելու համար:

ՆՈՅՆԻՆԻ ԿՐԻՍՏԻՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)

Չեր գործառնողի մէջ պատահած հարցերը տղն մի՛ տանիք եւ ձեր կնոջ կամ ամուսինին ամէն ինչ մի՛ պատմէք: Ան կ'ուզէ, որ դուք ըլլաք հանդարտ, ապա թէ ոչ տան մէջ կը ստեղծուի անհամ մթնոլորտ: Եղէք հասկըցող:

ՅՈՒՆ (21 Ապրիլէն 21 Մայիս)

Չեր գործերը կարգադրեցէք, ոչինչ ձգեցէք պատահականութեան, որպէսզի գալիք շաբաթը, որ բաւական ծանր հարցեր պիտի ստեղծէ, կարենաք դիմագրաւել ամէն ձեռքով: Ուրեմն, այսօր եւ վաղը տրամադրեցէք հանգիստի:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 23 Յունիս)

Սիրոյ նոր պատմութիւն մը պիտի ստեղծուի այսօր, իսկ դուք շուտով մի՛ տարուիք առաջին տպաւորութեան, որովհետեւ ան կրնայ խաբող ըլլալ:

ՆԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)

Ընտանեկան ճաշի մը տան մի՛ խօսիք այնպիսի հարցի մը մասին, որ կրնայ բարկացնել ձեր շուրջինները: Անխոհեմութիւն մի՛ ընէք, եթէ անտրամադիր էք, լաւ էր ընտանեկան խօսակցութեան օրը կը պահանջէ հանդարտութիւն:

ԱՌԻՒԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Նոյեմբեր ամսուան ընթացքին պիտի ըլլաք ոգեւորուած, աշխուժ եւ լուստես: Այսօր փոխեցէք ձեր գաղափարը եւ դուք ձեռք ձեռք ձեր շուրջիններէն շաբաթավերջ մը տունէն դուրս:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Այս նոր ամսուան ընթացքին պիտի ունենաք հանելի անակնկալներ, որոնք պիտի մեղմացնեն ձեր շուրջիններէն: Տեսնական մարգար այս ամիս պիտի ըլլաք գոհացողիչ, եւ բնաւ պիտի չենդուրս տուրքի կամ այլ վնասումի պարագային, որովհետեւ նախօրը կատարած էք յարմար կարգադրութիւններ:

ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերէն 23 Նոյեմբեր)

Նոր ամիսը ձեզի կը բեյադրէ բաշտարանի եւ մանուսանող համբերութիւն, որպէսզի ձեր տրամադրութիւնը բարձր մնայ: Անձնական հարց մը պիտի կարգադրուի ձեր կարծածէն շատ անիլի արագ եւ լաւ ձեռքով:

ԿԱՐԻՃ (24 Նոյեմբերէն 23 Նոյեմբեր)

Հակառակ ձեր բոլոր տրամադրութեան, ամսուան ընթացքին պիտի ըլլաք գործնական եւ լուստես: Սակայն այսօր պիտի ձրագրէք շաբաթավերջը անցնել ձեր տունէն դուրս խաղող անկիւն մը, որ լեցուն է յիշատակներով:

ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Չեր հոգեք մտնալու համար չկայ անիլի լաւ միջոց, քան կազմակերպել հանելի երեկոյթ մը բարեկամներով: Այս առիթով պիտի կարենաք ստեղծել սուսական օր մը, տարեդարի հանդիսութիւն մը:

ԱՅԾԵՂՋԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Եթէ անտեսուող կը զբաղիք, այսօր պիտի ունենաք անակնկալ վերելք մը, պիտի կարենաք հարցերը կարգադրել լաւ ձեռքով: Ոմանք ալ պիտի փորձեն ձեր կարողութիւնները:

ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)

Ուսանող էք կամ ուսուցիչ, պիտի ունենաք աշխուժ գործունէութիւն: Չեր այս տրամադրութիւնը պիտի երկարի քանի մը շաբաթ:

ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)

Կը վախճաք վերջնական որոշում տալու հարցի մը շուրջ. այդ պատճառով կը դիմէք ուրիշներու, որոնք չունին կարողութիւնը հարցեր լուծելու: Եղէք վախճական, ապա ինքեք միայն դուք ձեզի:

ՕՐԱՏԵՏՐ ՓԱՌԱՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

ՅՐԱՆՍԱԳԻՐ ՄՇԱԿՈՅԹԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԵՆՏԱՅՆՈՂ ՏԱՄՆՕՐԵԱԿ

Յրանսագիր մշակողի նուիրում տասնօրեայ փառատօնով մը Յրանսական Մշակութային Կեդրոնը պիտի պանծացնէ Յրանսագիր գրականութիւնը, երաժշտութիւնը եւ լրատուամիջոցները: Յրանսասոս Երկիրներու 9րդ Վեհաժողովին մշակութային նախաձեռնութիւններուն ծիրին մէջ «Լիր ան Ֆրանսէ է Թ'ան միւլիք» կը կազմակերպուի 11րդ տարին ըլլալով: 1-10 Նոյեմբեր երկարող այս նախաձեռնութիւնը տեղի կ'ունենայ «Պիլ-ԷԼ» կենտրոնին մէջ: «Լիր ան Ֆրանսէ է Թ'ան միւլիք»-ին կը



«Լիր ան Ֆրանսէ է Թ'ան միւլիք»-ի

մասնակցին լիբանանեան այն օրաթերթերը եւ գրադարանները, որոնք ունին մասնակի կամ ամբողջական ձեռնարկներէն լիբանոնցի գիրքերու «Լիր ան Ֆրանսէ է Թ'ան միւլիք»-ին կը

Երգահանդէս մեկնաբանութեամբ Ղատա Ղաճեմի, երկուցեան ժամը 9:00ին, ԵՈՒՆԵՍԿՕ-ի պալատին մէջ:

Գործերու եւ ծածկոցներու ցուցահանդէս, մինչեւ 10 Նոյեմբեր, «Ֆորում ար Պէյրոս»-ի մէջ:

«Շէ մուս, չէ թուս», լիբանոնցի եւ եւրոպացի արուեստագէտներու գործերու ցուցադրութիւն, քաղաքամէջ «Ազարիէ» շէնք, մինչեւ 9 Նոյեմբեր:

Ցուցահանդէս «Մեզու տիւ վերթիւ» Անիթա Թուրքիական ընկերակցութիւն իր գեղանկարներն ու արուեստի գեղարուեստները, «Էսփաս Ս. Տաղէր»-ի մէջ, ժամը մէկ:

«Լիպան 1860-1861», Օսման Բոմբոյի գեղանկարներու ցուցահանդէս «Մարտ»-ի քանդակարան, մինչեւ 15 Նոյեմբեր:

Table with TV and radio program listings including times and channel names.

ՄԻՒԹԵՄԱԿԱԼ 7:00- Լուրեր 9:00- Այլ միջոցով ՄԱԿԱՏ 12:00- Խոհանոց 13:00- Յիշէ ինք 13:05- Ամերիկեան ժապաւէն՝ «Ափ, ափ հետ ընէլ» 15:00- Լուրեր 15:30- Նշէ՛րը Ուրլոյ 16:30- Յուրիս 19:00- Այլ ֆախս

ԱՉԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 2 Նոյ. 1952



ՀԱՃՆՈՅ ԳՈՅԱՍԱՐՏ ՄԻՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԷՍԸ

Հաննոյ Գոյամարտ Միութիւնը վերապրողներու կազմակերպած աւանդական մատարօրնութեան ետք գեղեցիկ գաղափարը յղացած էր սարքելու Հանընի հերոսամարտի 32րդ տարեկիցի առիթով յիշատակի հանդէս մը, որ տեղի ունեցաւ 26 Հոկտեմբեր Կիրակի կէսօրէ ետք ժամը 6:00ին, Բարանքի մայր Օգն. Խաչի սրահին մէջ: Ինչ ժամանակէն Օգն. Խաչի սրահը արդէն իսկ բերնէ բերան լեցուն էր միութեան անդամներու, հայրենակիցիներու եւ բարեկամներու բազմութեամբ մը: Հանդէսի նախագահ Միհրան Խրիմեան հերոս մարտիկներու ի յարգանս, վայրկեան մը ներկայացրէր յոյնական լուստեսան հրաւիրեց, ապա «Օրհանն եկաւ, մեծ անտիստով» խմբերգէն ետք, կատարեց իր բացման խօսքը:

(Հատուած) ԳՈՅԱՍԱՐՏԻ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ՎՇԽԱՐՏ



ՆՇՄԱՐ

ԹՈՂ ԱՄՉՆԱՆ ԲՈՒՈՐ ԹԵՐԱՀԱԻԱՏՆԵՐԸ

Այն բոլոր թերահաւատներն ու դասալիքները, որոնք կը յայտարարէին, թէ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի խումբը Բ. դասակարգ փոխադրուելով պիտի կորսնցնէ իր համակիրները, պէտք է ամչանա եւ փակեն իրենց բերանը միանգամընդմիջտ, լռե՛ն այլեւ:

Երէկ, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտ «խումած» էին Հ.Մ.Ը.Մ.ի աւելի քան երկու հազար համակիրներ եւ լեցուցած՝ ամբողջ թրիպին մը:

Ի՞նչ բացատրութիւն կարելի է տալ այս երեւոյթին, եթէ ոչ հաւատք, համոզում, գաղափարական համակարգի ոչ թէ սոսկական ֆուտպոլի խումբի մը նկատմամբ, այլ միութեան մը նկատմամբ, գաղափարախօսութեան տէր միութեան մը, որ ունի ազգային - գաղափարական վեհ առաջադրանքներ, մարպականէն շատ անդին՝ «Բարձրացիր - Բարձրացուր» խորհմաստ նշանաբանով:

Միշտ այսպէս եղած է Հ.Մ.Ը.Մ.ի պարագան: Մեզի համար պարմանալի կամ անակրկալ ոչինչ կար երէկ թրիպինին մէջ: Մենք քաջ գիտէինք, որ այս վիճակը պիտի պարպուի հոն: Մենք լաւ կը ճանչնանք մեր անանման համակիրները, որոնք առաջին անգամ չէ, որ կու տան այս օրինակը: Հ.Մ.Ը.Մ. իր ամենէն դժուար օրերուն բնականաբար աւելի՛ համակիր ունեցած է իր կողքին, պարպապէս որովհետեւ անոր համակիրը դաշտ կ'ուղղուի ոչ թէ ֆուտպոլ դիտելու, այլ Հ.Մ.Ը.Մ.ի խումբը քաջալերելու՝ Եռագոյն հազած կազմին ոգի ի բոխն տէր կանգնելու համոզումով:

Գ. դասակարգ փոխադրուելու պարագային այլ նոյն պիտի տեսնէք, թաղային անընթաց խումբ մըն այլ դառնալու պարագային: Որովհետեւ մեր համակիրներուն համար գաղափարական - միութեանական ոգին կը գերադասէ մնացեալ բոլոր տուեալները: Այս երեւոյթին փաստը տուած ենք բազմիցս, տուիք երէկ եւս, կու տանք նաեւ վաղը եւ ընդմիջտ: Մենք հարց չունինք, ոչ այլ բարդոյթ այս իմաստով: Թող մտահոգուին մեր մրցակիցները, մանաւանդ մեր հակառակորդները. իսկ թերահաւատները միանգամընդմիջտ թող փակեն իրենց բերանը, ամբչանան իրենց յայտարարութիւններէն, վորս կատարած են ամբողջ ամբան ընթացքին եւ թող դարձի գան, վերադառնան իրենց անկեղծ համակիր ընկերներուն հսկայական փաղանգին ու անոնց հետ թող շարունակեն, շարունակե՛նք մեր երթը:

Սեփական աչքերով պէտք էր տեսնել երէկ մեր խումբերէն համակիրները, որոնք անտեսելով բոլոր դժուարութիւնները, Ուրբաթ օրով փութացին դաշտ ու դարձեալ ամենայն հպարտութեամբ հնչեցուցին անկրկնելի «Յառաջ Նահատակը»՝ դէպի յաղթանակ միակ համոզումով:

Հ. Վ.

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ. ՅԱՂԹԱՆԱԿՈՎ ՍԿՍԱԻ 2002-2003 ԵՂԱՆԱԿԸ



2002-2003 եղանակին Հ. Մ. Ը. Մ. ֆուտպոլի Գերկայացուցչական խումբը

Լիբանանի ֆուտպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 2002-2003 եղանակի բացման մրցումին, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբը յաղթանակով սկսաւ, երբ երէկ Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ 3-1 արդիւնքով (Կրսախաղ՝ 2-0) պարտութեան մատնեց Հըրրիէ Մաժտալ Այնճաբը:

Մրցումին առաջին 15 վայրկեաններուն Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները թրդէն նշանակեցին երկու կողմ, շնորհիւ Բաֆֆի Ջուլֆայանի եւ Դրո Բէհէյանի:

Բ. կրսախաղին Բաֆֆի առիթ մը եւս ունեցաւ նշանակելու իր երկրորդ կողմ, սակայն անոր փեղաթիւնը զսպուցեց մրցակից բերդապահին կողմէ:

Այս կորսուած առիթէն ետք, Հ.Մ.Ը.Մ. նշանակեց իր երրորդ կողմ, շնորհիւ շուէտացի Թոմաս Պիորքի, որ քոռըրէ մը եկած գնդակը գլուխով գետեղեց բերդէն ներս: Հըրրիէ Մաժտալ Այնճաբ օգտուելով Հ.Մ.Ը.Մ.ի բերդապահ - յետսապահ անհասկացողութենէն՝ նշանակեց իր որր կողմ:

Թէեւ վարդան Ղազարեան դաշտ ներկայացաւ մրցումին վերջին 10 վայրկեաններուն, այսուհանդերձ անոր կարճ ներկայութեան արդէն իսկ խումբը ստեղծեց

վտանգաւոր շատ մը առիթներ, առանց սակայն կողմ նշանակելու: Հ.Մ.Ը.Մ. կրնար շատ աւելի կողմ նշանակել կազմի մը դէմ, որ յիշատակեալի ոչինչ կրցաւ ընել, մանաւանդ որ մեր տղաքը ամբողջութեամբ տիրապետեցին մրցումին:

Ա. Հանգրուանի մրցումները շարժափոխընթաց կը շարունակուին հետեւեալ յայտագիրին հիմամբ (բոլոր մրցումներն ալ տեղի կ'ունենան ժամը 2:30ին).

ԱՅՍՕՐ
Թատամոն Նապաթիէ - Իժմիմաի
Հ.Մ.Մ. - Տապապ Թրիփոյի
Անի Սալտա - Ֆիբիան Սալտա

ՎԱԶԸ
Իսլամ Պըրճ Կիմալի - Ռասիկ
Մահապպա Թրիփոյի - Տապապ Խիամ

Նահուա Պար Ելիաս - Ռ. Ուալ Ատապ
●ԼԻԲԱՆԱՆԻ ֆուտպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 2րդ հանգրուանի շարժափոխընթաց մրցումներուն յայտագիրն է-

Ա.ՅՍՕՐ	Ժ.Ա.Մ	Գ.Ա.ՇՏ
Ա.Նու - Թատամոն Սուր	2:30	Ա.Նու
Մապարրա - Սալամ	5:00	Պէյրուք
Վ.Ա.ՂԸ		
Սամես - Ալիս Անի Ալի	2:30	Պ. Համուտ
Ա.Նսար - Տապապ Սանի	2:30	Պէյրուք
Սաֆա - Պըրճ	2:30	Սաֆա
Նըմմէ - Օլիմփիք	5:00	Մ. Աւան

ԵՆ. ՊԻ. ԷՅ.

ՈՒԻԶՈՐՏԾ ԶԱԽԶԱԽԵՑ ՍԵՆԹԻՔՍԸ՝ 114-69

ԵՆ. ՊԻ. Էլ.ի երէկեան մրցումներուն, Ուաշինկթըն Ուիլլամսը արժանազան կարգով արժանազան պատմական յաղթանակ մը, երբ 114-69 արդիւնքով շախջախեց իր մրցակիցը՝ Պոսթըն Սեյթիքսը, այս վերջինին դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին:

Մայքըլ ճորտընի կազմին արժանազան ալ յաղթանակը նկատուցաւ պատմական, որովհետեւ Սեյթիքս նախապէս իր ամենէն ծանր պարտութիւնը կրած էր 4 Յունուար 1977ին՝ Փորթլենտ Թրէյլ Պլէյ-զրրպէն, 128-84 արդիւնքով: Ճորտըն դաշտ ներկայանալով 22 վայրկեան նշանակեց 21 կէտ, իսկ անոր խմբակից ձեռքի Սթէյք-հաուս՝ 22 կէտ, 7 ռիպաուստ եւ 10 էփսաք:

Սթէյք-հաուսը չորս իր կարգին յաղթանակ մը արժանազան կարգով 105-98 արդիւնքով պարտութեան մատնելով Եուրթ ձեպը: Յաղթական կազմին մարպիկներն Կլէյն Ռոպինսընը նշանակեց 30 կէտ, իսկ անոր խմբակից ձեռքըն Թրիլ՝ 21 կէտ եւ 13 էփսաք:

Երէկուան երրորդ եւ վերջին մրցումին Սաքրամենթո Քինկկ 100-72 արդիւնքով պարտութեան մատնեց Փորթլենտ Թրէյլ Պլէյզրրպէն: Քինկկի մարպիկներէն Փրէտ-րալ Սթոմպըրդիչ նշանակեց 26 կէտ, իսկ անոր խմբակից Պուպի ձեպընը՝ 20 կէտ եւ 10 ռիպաուստ:

ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ

Հ. Ս. Գ. Մ. ԱՎԱԴԵՄԻԱՅԻ ՍԱՐԶԻԿՆԵՐԸ ԱՐԶԱՆԱԳՐԵՑԻՆ ԸՆԴ ԱՐԴԻԻՆՔՆԵՐ



25-27 Հոկտեմբեր 2002ին Փորթլենտի մէջ տեղի ունեցաւ Վու Շու Բոնկ Ֆուբի Եւրոպական Գրգ Ախոյեանութիւնը:

Հ.Ս.Գ.Մ. ակադեմիայի մարզիկներ՝ Դալար Հարմանտայեան, Աւետիս Սերրորեան, Սեւակ Թամուրեան եւ Յարութ Վարդանեան մասնակցեցան ախոյեանութեան ներկայացուցչութիւնը Լիբանանը:

Մարզիկները գրաւեցին հետեւեալ դիրքերը. Դալար Հարմանտայեան՝ 2 արծաթ մետալ - 2րդ դիրքը առաւել պատուոյ գիր - 4րդ դիրքը Սեւակ Թամուրեան պատուոյ գիր - 5րդ դիրքը Աւետիս Սերրորեան պատուոյ գիր - 5րդ դիրքը

SANDY'S
Anti-Stress
ՍԱՐՁՈՒՄԻ
ՆՈՐ ԿԵԴՐՈՆ
ՁԵԳՉՈՒՄԸ ՍԱԿԵՐ
ՍԱՆՁՈՐ ԲԱՍԱՐ,
ՏԵՔՆԻԿԱԿԱՆ ՕՊՈՒՍ.
ԸՆՈ. 03/256583:
ԿԱԿԱՏՈՒՄԸ ԵՎ ՍԱՐԶՈՒՄԸ

ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄՐՅԱՇԱՐՔ
ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԻՌՈՎ
ԿԵՅՈՍԵՐՊՈՒԹԵՍՄԸ
Հ.Մ.Ը.Մ. ԱՆՈՒԹԻՒՄ
ՍԱՐԶԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

Տար ԿՈՒՆԵԱՅ ՄՉԵՐԻ
ԱՂԲԱԼԵԱՆ - Հ.Մ.Ը.Մ.
ՍԱՐԶԱՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ-ԻՆ ՈՒՅ
ԹՈՒՄԿԱՆ 8-22 ՆՈՅԱԲԵՐ, 2002

Մտնուածութեան շտապ
03 / 252380
03 / 366404

ՃԱՏՐԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆ - ՊԻԵՆՆՈՒՍԻԱ՝ 2-2

Պլէտ քաղաքին մէջ (Սլովենիա) տեղի ունեցող ճատրակի 35րդ Ողիմպիական մրցումներուն 7րդ հանգրուանին իր կատարած մրցումին, երէկ Հայաստանի տղոց հաւաքականը 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Պիելլոուսիոյ հետ: Այժմ Հայաստանն ունի 18,5 կէտ:

ՖՈՒԹՊՈՒԼ

ԵՒՐՈՊԱՅԻ ԵՄԲԱՍԹԱՎԵՐՁԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Շարժափոխընթաց, Եւրոպայի մէջ տեղի կ'ունենան ֆուտպոլի ախոյեանութեան մրցումները, որոնցմէ կարեւորագոյնները վստահաբար, որ ինչպէս միշտ կ'ըլլան՝ Սպանիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ (Քալչիո), Անգլիոյ եւ Գերմանիոյ (Պուլտըսիլիա) ախոյեանութիւնները:

ՄՊՆԻՈՅ ֆուտպոլի ախոյեանութեան 8րդ հանգրուանին ամենէն կարեւոր մրցումը տեղի կ'ունենայ այսօր, երբ Տեփորթիո Քորուսա (6րդ) կը հիւրընկալէ Ռեալ Մատրիլը (4րդ): Անոնք երկուքն ալ ունին 12ական կէտ:

Ախոյեանութեան մրցումներուն, Ռեալ Մատրիլ վերջին անգամ Տեփորթիո Քորուսայի դաշտէն յաղթական վերադարձած է 1991-92 եղանակին:

Պարագուիսի դիրքը գրաւող Ռեալ Սուսետատ, որ ցարդ անպարտելի միակ խումբն է, հիւրը պիտի ըլլայ Վարսելի: Իսկ վերջին դիրքը գրաւող Ռեալ Մատրիլը չունի վաղ յաղթանակ չէ արձանագրած հիւրը պիտի ըլլայ Օաստուսի:

●ՖՐԱՆՍԱՅԻ ֆուտպոլի ախոյեանութեան 13րդ հանգրուանի մրցումներուն, անցեալ եղանակի ախոյեան Լիոն դժուար մրցում մը ունի կատարելիք, երբ հիւրընկալէ Սիքս: Դժուար այն իմաստով, որ Նիս այս եղանակին օտար դաշտի վրայ կրած է միայն մէկ պարտութիւն:

Պարագուիսի դիրքը գրաւող Պորտո իր կարգին դժուար մրցում մը ունի կատարելիք, երբ հիւրը ըլլայ Նանթ, թէեւ այս վերջինը այդքան ալ լաւ դիրքի վրայ չի գտնուիր (16րդ):

Մարսել պիտի հիւրընկալէ Մոնպելիէն, իսկ Փարիս Սեն Ժերմէն հիւրը պիտի ըլլայ Սըտանի:

●ԻՏԱԼԻՈՅ ֆուտպոլի ախոյեանութեան (Քալչիո) 7րդ հանգրուանի մրցումներուն, պարագուիսի դիրքը գրաւող Ինթեր Միլան, որ ցարդ պարտութիւն չէ կրած հիւրը պիտի ըլլայ Քոնտին, որ ցարդ յաղթանակ չէ արձանագրած:

Ինթերի նման ցարդ անպարտելի երկրորդ խումբը Եուվեթուս իր կարգին իր մրցումը պիտի կատարէ օտար դաշտի վրայ՝ Մոնտեալի դէմ: Քոնտին նման ցարդ այս եղանակին յաղթանակ չէ կրցած արձանագրել նաեւ վերջին դիրքը գրաւող Աթալանթա:

●ԱՆԳԼԻՈՅ ֆուտպոլի ախոյեանութեան 12րդ հանգրուանի մրցումներուն, պարագուիսի դիրքը գրաւող Լիվըրքուլ, որ ցարդ անպարտելի միակ խումբն է, պիտի հիւրընկալէ Ռեյքս Համը: Անիկ իր ամէն կարելին պիտի ընէ օգտուելու համար Արսենալի եւ Մանչեսթըր Եունայթեդի արձանագրած ոչ համոզիչ արդիւնքներէն, անոնցմէ աւելիով հեռանալու համար:

●ԳԵՐՄԱՆԻՈՅ ֆուտպոլի ախոյեանութեան (Պուլտըսիլիա) 11րդ հանգրուանի մրցումներուն, պարագուիսի դիրքը գրաւող Պայէրն Միւնխի այժմ պիտի կեդրոնանայ միայն ախոյեանութեան մրցումներուն վրայ, «Չէմփիընզ Լիգ»ի ֆուտպոլի մրցաշարքէն դուրս մնալէ ետք:

Յարդ անպարտելի միակ կազմը՝ Պորուսիա Տորթնուտ, որ պիտի հիւրընկալէ Համպուրկը, պիտի շարունակէ՝ մնալ անպարտելի:

ԿԱԼԵՍԻ ԽՈՐԸՐԴԱՐԱՆԸ...

Շարունակուած Ա. ԷջԵԳ

որ նեցուկ չկանգնի Եւրոպական Միութեան անդամակցութեան համար Թուրքիոյ դիմումին, այնքան առեւ, որ այդ երկիրը չէ ճանչցած 1915ի Հայկական Յեղասպանութիւնը եւ վերջ չէ դրած Հայաստանի դէմ կիրարկուած տնտեսական պատժամիջոցներուն:

Այս նուաճումին մասին խօսելով՝ Հայ Դատի Եւրոպայի Յանձնախումբի ատենապետ Հիլտոն Չոպուեան ըսաւ. «Կալչիի երեսփոխաններուն այս յայտարարութիւնը կ'իյնայ Եւրոպայի մէջ վերջին տարիներուն ընթացքին Հայկական Յեղասպանութեան ճարտարագիտութիւնը որոշումներու ծիրին մէջ, բան նաչման բացմաթիւ որոշումներու ծիրին մէջ, որ ցոյց կու տայ, թէ Եւրոպական քաղաքական շրջանակներուն մէջ հետզհետէ կը զարգանայ հայերու դէմ գործադրուած Յեղասպանութեան քաղաքական եւ այժմեական բնոյթին գիտակցութիւնը: Յայտարարութիւնը նաեւ կը համընկնի Եւրոպական Խորհրդարանին կողմէ 1987ին որդեգրուած բանաձեւին հետ, ուր Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան դիմաց անյաղթահարելի արգելք կը նկատուէր Հայկական Յեղասպանութեան Թուրքիոյ կողմէ չճանաչումը:

Հայ Դատի Եւրոպայի Յանձնախումբը այս առիթով շնորհակարարական նամակներ յղած է յայտարարութիւնը ստորագրող երեսփոխաններուն:

